ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"_6_" նոյեմբերի 2012թ № 143-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ <<ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ՝ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցութային կարգը հաստատելու մասին» N 145-Ն որոշման 6-րդ կետով, **ո ր ո շ ու մ եմ.**

1. Հաստատել Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող՝ <<Գորիսի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմի՝ տնօրենի ընտրության մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

Դոլունց Արա	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ
Ծատրյան Աշոտ	աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Կոզմանով Կառլեն	աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Հովհաննիսյան Անահիտ	աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ
Ղազարյան Թադևոս	աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ
Դավթյան Սուսաննա	աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
Կոստանդյան Մուշեղ	աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին – մարզային հողային պետական տեսչության պետ

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Արա Դոլունցին:
3. Մրցութային հանձնաժողովի քարտուղար նշանակել Կառլեն Կոզմանովին:
4. Աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյանին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. նոյեմբերի 6
ք. Կապան